Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
մարտի 23-ի նիստի N 12
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՌՍՈՒՑՄԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

N N ը/կ	**Նպատակ-խնդիրը**	**Գործողությունը**	**Կատարման վերջնաժամկետը**	**Պատասխանատու մարմինը/ կազմակերպությունը**	**Օբյեկտիվ վերստուգելի չափանիշը**	**Ֆինանսական ապահովումը**
1. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրավական կրթության, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրավունքի ուսուցման եվ հասարակության իրավական համաուսուցման համակարգի ներդրմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումներ						
1.1.	Իրավական դաստիարակության արդյունավետության բարձրացումը խթանելու նպատակով ՀՀ նախադպրոցական կրթության համակարգում ներդնել իրավական կրթության, ներառյալ դաստիարակության նոր սկզբունքներ:	1) Լրամշակել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և ծրագրերը՝ ներառելով իրավական մշակույթի ծանոթացման համար դասաժամեր, 2) Մշակել և կիրառել նախադպրոցական կրթության համար ուսումնաօժանդակ նյութերի ծրագրային փաթեթ	2017 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնու-թյամբ)	ՀՀ նախադպրոցական կրթության համակարգում իրավական կրթության, ներառյալ դաստիարակության նոր սկզբունքները ներդրված են և իրավական դաստիարակության արդյունավետությունը բարձրացված է:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1.2.	Հանրակրթական տարրական, միջին և ավագ մակարդակների կրթական ծրագրերում ապահովել իրավական համաուսուցման և դաստիարակության համակարգի կատարելագործումը:	Հանրակրթության ոլորտում իրավական կրթությունը, ներառյալ դաստիարակությունը դարձնել ուսումնական առանձին բնագավառ, կատարել դրանից բխող անհրաժեշտ փոփոխություններ և վերանայել հանրակրթության պետական չափորոշիչը:	2017 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնու-թյամբ)	Հանրակրթության բոլոր մակարդակներում՝ տարրական (1-4 դասարաններ), միջին (5-9 դասարաններ), ավագ (10-12 դասարաններ), սովորողների իրավական գիտակցության աստիճանը բարձրացված է, իսկ իրավական մշակույթը ձևավորված:	Ֆինանսավորում չի պահանջվում:
2.Միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի ձևավորմանն ուղղված միջոցառումներ						
2.1.	Ապահովել միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգի կատարելագործումը և դրա արդյունավետ կիրառումը գործնականում:	Հստակեցնել և ընդլայնել աշխատանքի այն տեսակները, որոնց համար միջին մասնագիտական իրավաբանական կրթությունը կարող է բավարար լինել (օրինակ՝ դատական նիստի քարտուղար, քրեակատարողական որոշ խմբերի ծառայողների, դատական կարգադրիչների և այլն) և փոփոխություններ կատարել տվյալ պաշտոնի համար պահանջներ պարունակող փաստաթղթերում:	2018 թվականի առաջին եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն	Միջին մասնագիտական իրավաբանական կրթության համակարգը կատարելագործված է և կիրառված է գործնականում:	օրենքով չարգելված այլ օղբյուրներ

		1) Ապահովել իրավունքի ոլորտի միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրերի ներդրմանն ուղղված պետական աջակցությունը, Ապահովել կրեդիտների կուտակման և փոխանցման միջոցով ուսանողների շարժունությունը միջին մասնագիտական իրավաբանական կրթական համակարգի ներսում, ինչպես նաև միջին մասնագիտականից դեպի բարձրագույն իրավաբանական կրթության համակարգ,	2017 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)		
		2) Քննարկել բարձրագույն մասնագիտական կրթության համակարգից միջին մասնագիտական կրթական համակարգ ուսանողների շարժունության ապահովումը	2017 թվականի չորրորդ եռամսյակ			

		3) Ապահովել իրավունքի ոլորտի միջին մասնագիտա-կան կրթության մասնագիտությունների ցանկի և դրանց համար պետական կրթական չափորոշիչների հաստատումը:	2018 թվականի երրորդ եռամսյակ			
2.2. .	Ապահովել մասնագիտական կրթություն ստացող անձանց իրավական համաուսուցումը, մասնագիտական ոլորտի իրավական հիմնահարցերի իմացությունը, նրանց իրավագիտակցության մակարդակի բարձրացումը:	Իրավական համաուսուցման համակարգը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով դարձնել պարտադիր, մասնավորապես սահմանել իրավունքի հիմունքների պարտադիր ուսուցման պահանջ:	2017 թվականի երկրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավական համաուսուցման համակարգը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով պարտադիր է:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3. Բարձրագույն իրավաբանական կրթության համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումներ						
3.1.	Կատարելագործել և հստակեցնել իրավաբանի որակավորմանը և իրավաբանական կրթությանը ներկայացվող պահանջները և չափորոշիչները	1) Նախատեսել իրավաբանի մասնագիտությանը ներկայացվող պահանջների իրավաբանական կրթությունը կանոնակարգող	2017 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1) Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական կրթությունը կանոնակարգող իրավական ակտն ընդունվել է: 2) Իրավաբանական կրթության պետական	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		իրավական ակտի ընդունում: 2) Վերանայել և մշակել որակյալ և պրակտիկային միտված իրավաբանական կրթություն տրամադրելուն ուղղված իրավաբանական կրթության պետական կրթական չափորոշիչներ, 3) Վերհանել մասնագիտական գործունեության այն տեսակները, որոնցով զբաղվելու համար պահանջվում է իրավաբանական կրթություն և գործունեության յուրաքանչյուր տեսակի առանձնահատկություններից ելնելով, սահմանել նվազագույն կրթական աստիճանը՝ բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս, իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունեցող մասնագետ: 4) Բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթությունն օրենքով			կրթական չափորոշիչները և իրավաբանական կրթություն պահանջող մասնագիտական գործունեության տեսակները սահմանված են: 3) Բարձրագույն մասնագիտական իրավաբանական կրթությունն օրենքով ճանաչվել է հարակից մասնագիտություններ չունեցող:	

		ճանաչել հարակից մասնագիտություններ չունեցող, 5) Քննարկել հեռահար և դրսեկության ձևերով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկում իրավաբանական կրթությունը ներառելու նպատակահարմարությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքները:				
3.2.	Վերանայել իրավաբանական կրթության բնագավառում բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության պահանջները	Կատարելագործել իրավագիտություն մասնագիտությամբ ուսանողների ընդունելության կառուցակարգերը, նախատեսել իրավաբանական ֆակուլտետներ ընդունելության ժամանակ իրավունքի հիմունքների բնագավառում բազային գիտելիքների ստուգման պահանջ:	2017թ. երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավագիտությամբ մասնագիտությամբ ընդունելության կառուցակարգերը հաշվի են առնում դիմորդի մոտ բազային իրավաբանական գիտելիքների մակարդակը:	Ֆինանսավորում չի պահանջվում:
3.3.	Արդիականացնել կրթական ծրագրերը՝ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին	1) Պարտադիր դասավանդվող	2017 թվականի երկրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1) «Հայաստանի պետության և իրավունքի	Ֆինանսավորում չի պահանջվում:

	համապատասխան	«Հայաստանի պետության և իրավունքի պատմության» դասընթացի դասաժամերն ավելացնել, 2) Կատարելագործել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգը՝ հիմքում դնելով մասնագետի «իմացության, ունակությունների և հմտությունների» զուգակցման սկզբունքը, 3) Ուսումնասիրել առանձին մասնագիտական դասընթացներ կամ դասընթացի առանձին թեմաներ օտար լեզվով դասավանդելու միջազգային փորձը և հեռանկարում նախատեսել առնվազն մեկ մասնագիտական իրավաբանական առարկա օտար լեզվով դասավանդելու պահանջ		Իրավաբանական կրթություն իրականացնող բուհեր	պատմության» դասընթացի դասաժամերն ավելացվել են և կատարելագործվել է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգը: 2) Մեկ իրավաբանական առարկա դասավանդվում է օտար լեզվով : 3) Ներդրված են նյութեր ուսանողների շրջանում սեռային հավասարության՝ որպես արժեքի ընկալման խրախուսումն ապահովելու համար:	

		4) Մշակել նյութեր իրավաբանական կրթություն իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների շրջանում սեռային հավասարության՝ որպես արժեքի ընկալման խրախուսումն ապահովելու համար:				
3.4.	Վերանայել գիտելիքների գնահատման համակարգը:	1) Մշակել ուսանողների անհատական հետազոտական աշխատանքների ինքնուրույնության ապահովման, «գրագողությունից» (plagiarism) խուսափելու և բացահայտելու համակարգչային ծրագրերի և, քննական գրավորների անանուն ստուգման մեխանիզմներ, 2) Ներդնել քննական գրավորների անանուն ստուգման և գնահատման մեխանիզմներ	2018 թվականի առաջին եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն Իրավաբանական կրթություն իրականացնող բուհեր (համաձայնությամբ)	Քննական գրավորների անանուն ստուգման մեխանիզմները և «գրագողությունից» (plagiarism) խուսափելու և բացահայտելու համակարգչային ծրագրերը մշակված և ներդրված են:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.5.	Բարձրացնել իրավաբան-ուսանողների արտադրական պրակտիկաների	1) Ներդնել ուսանողների	2017-2018 թթ. (շարունակական)	ՀՀ կրթության և գիտության	Յուրաքանչյուր պետական մարմնում մշակված է պրակտիկա անցնելու	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	կազմակերպման արդյունավետությունը:	կարճաժամկետ կամ երկարաժամկետ ստաժավորում անցնելու (վճարովի կամ անվճար հիմունքներով) և ուսանողների արտադրական պրակտիկաների արդյունավետության ապահովման ուղղությամբ պետական կրթական չափորոշիչներում արդյունավետ մեխանիզմներ Բարձրացնել առնվազն պետական մարմինների համակարգված աջակցությունն այս ոլորտում՝ մշակելով պետական մարմիններում կարճաժամկետ և երկարաժամկետ ստաժավորում անցնելու ընթացակարգեր, պրակտիկայի բովանդակությանը ներկայացվող պահանջներ, չափորոշիչներ, պրակտիկայի արդյունավետության վերահսկողության ընթացակարգեր:		նախարարություն << արդարադատության նախարարություն <<< գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) <<< քննչական կոմիտե (համաձայնությամբ) <<< դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) <<< ոստիկանության կրթահամալիր (համաձայնությամբ)	ընթացակարգ, ծրագիր, բովանդակության պահանջներ, չափորոշիչներ:	

3.6.	Կատարելագործել ուսանողների պրակտիկ հմտությունները և կարողությունները՝ իրավաբանական կլինիկաների ինստիտուտների զարգացման միջոցով:	1) Ապահովել պետական աջակցություն կլինիկաների հիմնումն և կանոնավոր գործունեությունը:	2017-2018թթ. (շարունակական)	ՀՀ կրթության և գիտության նախարարություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ) Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ) Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ) Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան (համաձայնությամբ) Գավառի համալսարան (համաձայնությամբ) ՀՀ ոստիկանության կրթահամալիր (համաձայնությամբ)	Համալսարաններում իրավաբանական կլինիկաները հիմնված են և կանոնավոր գործում են:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

3.7.	Ընդլայնել և արդիականացնել ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերը, ավելի թափանցիկ դարձնել դասագրքերի երաշխավորման գործընթացը:	1) Քննարկել միասնական իրավաբանական էլեկտրոնային գրադարանի ստեղծման հնարավորություն՝ բոլոր ԲՈՒՀ-երի ուսանողների համար մուտքի հնարավորությամբ, 2) Ապահովել միջազգային էլեկտրոնային ռեսուրսներին բոլոր ԲՈՒՀ-երի միասնական մուտքի հնարավորությունը:	2018 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ) Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ), Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ), Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան համաձայնությամբ) ՀՀ ոստիկանության կրթահամալիր (համաձայնությամբ)	Միասնական իրավաբանական գրադարանը՝ բոլոր ԲՈՒՀ-երի ուսանողների համար մուտքի հնարավորությամբ ստեղծված է և միասնական մուտքի հնարավորությունն ապահովված է:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.8.	Կատարելագործել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական	Ստեղծել պետական և հասարակական հիմնադրամներ՝ տարբեր	2018 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության	1) Գիտական, մասնագիտական և	օրենքով չարգելված այլ

	որակները և լիարժեք օգտագործել գիտական ներուժը երկրի քաղաքական և իրավական համակարգերում:	գիտական, մասնագիտական և մեթոդական վերապատրաստման ծրագրերին դասախոսների մասնակցությունն արտասահմանում խթանման նպատակով, նախատեսել պրոֆեսորադասախոսական կազմի գիտական ակտիվությանը նպաստող մեխանիզմներ, ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրության բոնուսային համակարգը:		նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ) Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ) Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ) Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան (համաձայնությամբ)	մեթոդական վերապատրաստման ծրագրերին դասախոսների մասնակցությունը արտասահմանում խթանման նպատակով հիմնադրամը ստեղծված է: 2) Պրոֆեսորադասախոսական կազմի վարձատրության բոնուսային համակարգը ներդրված է:	աղբյուրներ
3.9.	Իրավաբանի մասնագիտության դերը կարևորելու և դրա նշանակությունը բարձրացնելու նկատառումով սահմանել իրավաբանի մասնագիտական տոն	Ընդունել իրավաբանի մասնագիտական տոն սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշում:	2017 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) ՀՀ քննչական կոմիտե	Իրավաբանի մասնագիտական տոն սահմանելու մասին ՀՀ կառավարության որոշումն ընդունված է:	Ֆինանսավորում չի պահանջվում:

				(համաձայնությամբ) ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ) ՀՀ հատուկ քննչական ծառայություն (համաձայնությամբ) ՀՀ փաստաբանների պալատ (համաձայնությամբ) «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ) Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ) Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ) Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան (համաձայնությամբ) ՀՀ արդարադատության		

				ակադեմիա (համաձայնությամբ)		
3.10.	Ապահովել ուսանողների, դասախոսների, գիտնականների համագործակցությունը միջազգային գործընկերների հետ:	1) Կազմակերպել ուսանողների կրթություն օտարերկրյա գործընկեր բուհերում համատեղ կրթական ծրագրերով: 2) Ապահովել ուսումնական և ուսումնաօժանդակ նյութեր պատրաստելը խթանելու, արտասահմանում և երկրի ներսում տարբեր մասնագիտական և մեթոդական վերապատրաստման ծրագրերին դասախոսների մասնակցությունը: 3) Ապահովել հայալեզու իրավաբանական գրականության մշակման, օտարալեզու աղբյուրների թարգմանության ու տպագրության օժանդակումը:	2018 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն Իրավաբանական կրթություն իրականացնող բուհեր (համաձայնությամբ)	1) Ուսանողները մասնակցել են օտարերկրյա գործընկեր ԲՈՒՀ-երում համատեղ կրթական ծրագրերի և ստացել են համատեղ որակավորումներ: 2) Դասախոսների մասնակցությունն արտասահմանում և երկրի ներսում մասնագիտական և մեթոդական վերապատրաստման ծրագերին ապահովված է:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.11.	Խթանել բարձրագույն և հետբուհական իրավաբանական կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների համագործակցությունը:	Ստեղծել իրավագիտության ոլորտում բարձրագույն և հետբուհական իրավաբանական կրթություն տրամադրող ուսումնական	2017 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարա-դատության	ՀՀ բարձրագույն կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների ղեկավարների համապետական	Ֆինանսավորում չի պահանջվում:

		հաստատությունների ղեկավարների (դեկանների, տնօրենների) համապետական խորհուրդ:		նախարարություն «Երևանի պետա-կան համալսարան» հիմնադրամ (համաձայնությամբ) Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (համաձայնությամբ) Հայաստանում Ֆրանսիական համալսարան (համաձայնությամբ) Հայաստանի Ամերիկյան համալսարան (համաձայնությամբ) Գլաձորի համալսարան (համաձայնությամբ) Փաստաբանական դպրոց (համաձայնությամբ)	խորհուրդը ստեղծված է	
3.12.	Ապահովել մասնագիտական կրթություն ստացող անձանց իրավական համաուսուցումը, մասնագիտական ոլորտի իրավական հիմնահարցերի իմացությունը, նրանց իրավագիտակցության	Իրավական համաուսուցման համակարգը բարձրագույն ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով	2017 թվականի չորրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն	Իրավական համաուսուցման համակարգը բարձրագույն ուսումնական հաստատություններում բոլոր մասնագիտություններով պարտադիր է:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	մակարդակի բարձրացումը:	դարձնել պարտադիր, մասնավորապես սահմանել իրավունքի հիմունքների պարտադիր ուսուցման պահանջ:				
4. ԶԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման եվ համադաստիարակության կայուն համակարգի հիմնադրմանն ուղղված միջոցառումներ						
4.1.	Հիմնադրել ԶԼՄ-ների միջոցով իրականացվող իրավական համաուսուցման և համադաստիարակության կայուն համակարգ:	1) ԶԼՄ-ներում իրավական համաուսուցման և համադաստիարակության թեմաներով ներդնել հաղորդաշարեր: 2) ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար իրավունքի և դրա առանձին ճյուղերի վերաբերյալ կազմակերպել դասընթացներ:	2017 թվականի երրորդ եռամսյակ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ արդարադատության նախարարություն ՀՀ արդարադատության ակադեմիա	1) ԶԼՄ-ներում իրավական համաուսուցման և դաստիարակության թեմաներով հաղորդաշարերը ներդրված են: 2) Յուրաքանչյուր տարի ԶԼՄ-ների ներկայացուցիչների համար իրավունքի և դրա առանձին ճյուղերի վերաբերյալ դասընթացները կազմակերպվում են:	օրենքով չարգելված այլ աղբյուրներ